***Հաստատված է***
*Եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2019 թվականի նոյեմբերի 29-ի*
*թիվ 12 նիստում,*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*
***Լրամշակված է***
*Հայաստանի եվրոպական*
*համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2023 թվականի մարտի 07-ի*
*թիվ 42 նիստում,*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

***Approved by***
*the scientific council of the*
*European University*
*November 29, 2019*
*in session number 12,*
*Rector: H. Bisharyan*
***Amended in***
*the scientific council of the*
*European University of Armenia*
*March 07, 2023*
*in session number 42,*
*Rector: H. Bisharyan*

______________________________
(ստորագրություն, Կ.Տ./Signature)

## ՀԵՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՀԵՀ) որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականությունը սահմանում է ՈԱ ոլորտում բուհի նպատակները, խնդիրները, սկզբունքները, հիմնական ուղղությունները, բուհի ռազմավարական ծրագրի հետ կապը, ՊԻԳԲ որակի կառավարման սկզբունքի կիրառումը ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում, որակի ներքին ապահովման (այսուհետ՝ ՈՆԱ) համակարգի կառուցվածքը, ՈԱ քաղաքականության իրականացման դերակատարների գործառույթները, ՈՆԱ համակարգի ձևավորման, գործարկման, գնահատման և վերանայման փաստաթղթային հենքն ու սույն քաղաքականության վերանայման նախադրյալները:

1.2 Սույն քաղաքականության մշակման համար հիմք են ծառայել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը

## *EUA QUALITY ASSURANCE POLICY*

### *1. GENERAL PROVISIONS*

1.1 The European University of Armenia (hereafter: EUA) quality assurance (hereafter: QA) policy defines the university's goals, problems, principles, main directions in the field of QA, the connection with the strategic plan of the university, the application of the PDCA cycle quality management principle at the institutional and program levels, internal quality assurance (hereinafter, the IQA) system structure, the functions of the actors in the implementation of the IQA policy, the documentary basis for the formation, operation, evaluation and review of the IQA system and the prerequisites for the revision of the IQA policy.

1.2 RA Laws "On Education", "On Higher and Post-Graduate Professional Education", "On Approving the State Program for the Development of RA Education until 2030", the Charter of the EUA, 2023-2027 Strategic

զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքները, ՀԵՀ կանոնադրությունը, ՀԵՀ 2023-2027թթ ռազմավարական զարգացման ծրագիրը, Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները, ՀՀ որակի ապահովման չափանիշները, Որակավորումների եվրոպական և ազգային շրջանակները, ներքին իրավական այլ փաստաթղթերն ու որակի ապահովման ոլորտային հետազոտության արդյունքները:

Development Plan of the EUA, Quality Assurance European standards and guidelines, RA quality assurance standards, European and national frameworks of qualifications, other internal legal documents and the results of quality assurance field research served as the basis for the development of this policy.

1.3 Սույն քաղաքականությունն ընդգրկում է ՀԵՀ գործունեության բոլոր տիրույթները:

1.3 This policy covers all areas of EUA activities.

1.4 Սույն քաղաքականությունը նպատակաուղղված է ՀԵՀ-ում որակի ապահովման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ իրավանորմատիվային հենքով ու մեխանիզմներով ապահովմանը և դրանց համապատասխան որակի ներքին ապահովման գործընթացների իրականացմանը:

1.4 This policy is aimed at providing the necessary legal framework and mechanisms for the implementation of quality assurance processes at the EUA and the implementation of their corresponding internal quality assurance processes.

1.5 Սույն քաղաքականությունը տարածվում է ՀԵՀ ներքին և արտաքին շահակիցների վրա:

1.5 This policy applies to the internal and external stakeholders of EUA.

1.6 Սույն քաղաքականության իրականացման առաջնային պատասխանատվությունը կրում են ՀԵՀ ռեկտորը, Որակի ապահովման ու կրթական բարեփոխումների դեպատամենտի ղեկավարը և որակի պատասխանատուները (դեկաններ, ամբիոնների վարիչներ, դեպարտամենտների կամ այլ ստորաբաժանումների ղեկավարներ):

1.6 The primary responsibility for the implementation of this policy lies with the rector of the EUA, the head of the Department of Quality Assurance and Educational Reforms and other staff members (deans, heads of chairs, heads of departments or other divisions).

1.7 Սույն քաղաքականությունը հաստատում և դրանում փոփոխություններ է կատարում ՀԵՀ գիտական խորհուրդը (այսուհետ՝ Գիտխորհուրդ):

1.7 This policy is approved and amended by the Scientific Council of the EUA (hereinafter Scientific Council).

## 2. ՀԵՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## 2. GOAL AND OBJECTIVES OF THE QUALITY ASSURANCE POLICY OF EUA

2.1 Սույն քաղաքականության **նպատակն է** ՀԵՀ առաքելությանն ու ռազմավարական առաջնահերթություններին համապատասխան նպաստել համալսարանում կրթության որակի մշակույթի ամրապնդմանն ու շարունակական զարգացմանը և որակի

2.1 The goal of this policy is to contribute to the strengthening and continuous development of the culture of quality education in the university and to increase the role of stakeholders in the quality assurance processes in accordance with

ապահովման գործընթացներում շահակիցների դերակատարության բարձրացմանը:

ՀԵՀ որակի ապահովման քաղաքականության **խնդիրներն** են՝

1. շարունակաբար բարելավել և արդիականացնել որակի ներքին ապահովման համակարգը, մեխանիզմները, գործիքակազմը, ընթացակարգերը և որակի ապահովմանն առնչվող փաստաթղթային հենքը՝ ոլորտային հետազոտությունների իրականացմամբ,
2. հստակեցնել բուհի գործունեության բոլոր տիրույթներում որակի պատասխանատուների գործառույթները,
3. ապահովել անհրաժեշտ հիմքեր բուհի գործունեության արտաքին գնահատման համար՝ շարունակաբար հավաքագրելով անհրաժեշտ տվյալներ ու տեղեկություն և իրականացնելով գործունեության գնահատման վերլուծություններ և մշտադիտարկումներ,
4. նպաստել ՀԵՀ-ում որակի եվրոպական չափանիշների և չափորոշիչների ներդրմանը,
5. նպաստել ՀԵՀ առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացմանը,
6. խթանել ՀԵՀ-ում բարեվարքության, ներառյալ էթիկայի ու ակադեմիական ազնվության կանոնների պահպանումը,
7. հետևողական լինել բուհի բոլոր ուղղություններով գործող փաստաթղթային հենքի արդյունավետ կիրառմանը,
8. խթանել ուսանողակենտրոն մոտեցմամբ և ժամանակակից կրթական պահանջներին ու զարգացումներին համապատասխան ուսուցումը,
9. օժանդակել ՀԵՀ կառուցվածքային ստորաբաժանումներին իրենց գործունեության արդյունավետության բարձրացման հարցերում,
10. շարունակաբար նպաստել ՀԵՀ

the mission and strategic priorities of the University.

The **objectives** of the quality assurance policy of the EUA are:

1. to continuously improve and develop the internal quality assurance system, mechanisms, tools, procedures and documentation base related to quality assurance by conducting field research,
2. clarify the functions of those who are responsible for the quality assurance in all areas of the university activities,
3. to provide the necessary grounds for the external evaluation of the university activities by continuously collecting necessary data and information and carrying out activity evaluation analysiss and monitoring,
4. to contribute to the implementation of European quality standards and standards at the EUA
5. to contribute to the implementation of the mission and strategic goals of the EUA,
6. promote compliance with the rules of conduct, including ethics and academic integrity,
7. to be consistent in the effective use of the document support in all areas of the university,
8. promote teaching with a student-centered approach and in accordance with modern educational requirements and developments,
9. to assist the structural divisions of the EUA in matters of increasing the efficiency of their activities,
10. Continually contribute to the improvement of the structure and content of the degree programs of the EUA,
11. to strengthen cooperative ties at the national and international levels in order to increase the quality of educational services provided by EUA and to promote the internationalization of EUA activities,
12. contribute to the adaptation of degree programs to the requirements of the labor market, employers, the needs of external and internal stakeholders and the changing

կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության կատարելագործմանը,

11. ամրապնդել համագործակցային կապերը ազգային և միջազգային մակարդակներում՝ ՀԵՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայություն-ների որակի բարձրացման ու ՀԵՀ-ի գործունեության միջազգայնացումը խթանելու նպատակով,
12. նպաստել աշխատաշուկայի, գործա-տուների պահանջներին, արտաքին և ներքին շահակիցների կարիքներին և հասարակության հարափոփոխ պա-հանջներին կրթական ծրագրերի համապատասխանեցմանը,
13. նպաստել որակի ապահովման գործընթացներում բուհի շահակից-ների ներգրավվածության բարձրաց-մանը,
14. բացահայտել ՀԵՀ ինստիտուցիոնալ կարողությունները, որակի ապահով-ման համակարգի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները, մշակել բարելավ-ման միջոցառումներ և արտացոլել դրանք ուսումնական տարվա/ տարեկան աշխատանքային պլան-ներում,
15. ապահովել ՀԵՀ-ում բոլոր գործըն-թացների համար ՊԻԳԲ (պլանա-վորում-իրականացում, գնահատում-բարելավում) շրջափուլի կիրառումը,
16. նպաստել բուհի գործունեության բոլոր տիրույթների թափանցիկության ու հաշվետվողականության բարձրաց-մանը,
17. օժանդակել բուհի հեռանկարային ոլորտների բացահայտմանը:

demands of society,
13. contribute to increasing the involvement of university stakeholders in quality assurance processes,
14. identify the institutional capabilities of the EUA, the strengths and weaknesses of the quality assurance system, opportunities and threats, develop improvement measures and reflect them in the academic year/annual work plans,
15. to ensure the application of the PDCA (planning-do-check-act) cycle for all processes at the EUA,
16. contribute to increasing the transparency and accountability of all areas of the university activities,
17. to support the identification of prospective areas of the university.

## 3. ՀԵՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հիմնվելով բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելների, կառուցակարգերի

## 3. THE PRINCIPLES OF IMPLEMENTATION OF EUA QUALITY ASSURANCE POLICY

Based on the national and international best practices of higher education quality assurance

ազգային և միջազգային լավագույն փորձի վրա՝ ՀԵՀ որակի ապահովման քաղաքականությունն իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

1. **ներառականություն**. ՀԵՀ-ը կարևորում է որակի ապահովման գործընթացներում իր առանցքային շահակիցների ներգրավվածությունը և թիրախային կարիքների ու պահանջների բավարարումը՝ բուհի կատարողականի բարելավման, ՄԿԾ-ների գրավչության բարձրացման և բարձրագույն կրթության ոլորտում սեփական դիրքի ամրապնդման նպատակով:

2. **Արդյունքահենք կողմնորոշում.** ՀԵՀ-ի կանոնադրական և ռազմավարական նպատակներն իրագործելու ու զարգացում ապահովելու համար հիմնական շեշտադրումը դրվում է գործընթացներից ստացված արդյունքների վրա:

3. **Փաստահենք որոշումների կայացում**. ՀԵՀ որոշումների կայացման հիմքում ընկած են որակի ապահովման ոլորտին առնչվող քանակական և որակական վերլուծությունների արդյունքները:

4. **Փոխվստահություն և համագործակցություն.** ՀԵՀ-ում որակի ապահովման գործընթացները հիմնված են փոխադարձ վստահության ու համագործակցային կապերի վրա:

5. **Համապատասխանություն.** ՀԵՀ-ն իր գործունեության բոլոր տիրույթներում սույն քաղաքականությունն իրականացնելիս ապահովում է որակի ապահովման գործընթացների համապատասխանությունը ՀՀ կրթության օրենսդրությանը, բարձրագույն կրթության ազգային և եվրոպական համընդունելի արժեքներին, բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում սահմանված ազգային և եվրոպական պահանջներին (ԵԲԿՏ ՈՇ, ՈԵՇ, ՈԱԵՉՈՒ, ՀՀ ՈԱՇ, ՈՈՇ, ՀՀ հավատարմագրման չափանիշներ, ԿՓԵՀ, Դիպլոմի հավելված և այլն) ու փաստաթղթերին, կրթության և գիտության զարգացման միտումներին, ներքին և արտաքին շահակիցների

models, structures, the quality assurance policy of the Higher Education Institution is implemented according to the following principles:

1. **inclusiveness.** EUA emphasizes the involvement of its key stakeholders in quality assurance processes and the satisfaction of target needs and requirements in order to improve the university performance, increase the attractiveness of educational programmes and strengthen its position in the field of higher education.

2. **Result-based orientation**. In order to achieve the statutory and strategic goals of the EUA and to ensure development, the main emphasis is placed on the results obtained from the processes.

3. **Document-based decision-making.** The results of quantitative and qualitative analysis related to the field of quality assurance are the basis for the decision-making of the EUA.

4. **Mutual trust and cooperation.** The processes of quality assurance at the EUA are based on mutual trust and cooperative relations.

5. **Compliance.** While implementing this policy in all areas of its activity, the EUA ensures the compliance of the quality assurance processes with the RA education legislation, national and European acceptable values of higher education, national and European requirements set in the field of quality assurance of higher education (EHEA, QF, EQF, ESG, RA NQF,SQF, RA accreditation criteria, ECTS, Diploma Supplement, etc.) and documents, education and science development trends, internal and external stakeholders' needs and requirements, the university mission, its statutory and strategic goals, the university internal environment components.

6. **Self-evaluation and improvement.** The basis of the quality assurance processes at the EUA is the evaluation, self-analysis, improvement and further development of the capabilities of the structural units with a critical

կարիքներին ու պահանջներին, բուհի առաքելությանը, իր կանոնադրական և ռազմավարական նպատակներին, բուհի ներքին միջավայրի բաղադրիչներին:

6. **Ինքնագնահատում ու բարելավում.** ՀԵՀ-ում որակի ապահովման գործընթաց-ների հիմքում դրված են քննադատական մոտեցմամբ կառուցվածքային ստորաբաժա-նումների կարողությունների գնահատումը, ինքնավերլուծությունը, բարելավումն ու հետագա զարգացումը:

7. **Հաշվետվողականություն ու թափանց-ցիկություն.** ՀԵՀ-ը հաշվետու է իր շահա-կիցներին՝ պարբերաբար ապահովելով ամբողջական տեղեկատվություն բուհում իրականացվող գործընթացների վերաբեր-յալ:

8. **Չափելիություն.** ՀԵՀ գործունեությունը հիմնված է չափելի որակական ու քանակական ցուցանիշների (ԳԱՑ) ու տվյալների վրա:

9. **Արժանահավատություն.** ՀԵՀ-ում չափելի և հավաստի տվյալների հիման վրա իրականացվող գնահատումն ապահովում է գնահատման արժանահավատ արդյունքներ և հավաստում շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

10. **Նորամուծությունների ինտեգրում.** ՀԵՀ-ը կարևորում ու խրախուսում է որակի ապահովման գործընթացներում նոր մոտեցումների և գաղափարների կիրառումը:

11. **Պատասխանատվություն**. Բուհի կողմից մատուցվող կրթական ծառայություն-ների որակի համար պատասխանատու է բուհի ողջ անձնակազմը:

12. **Անձնակազմի մասնագիտական զար-գացում և խրախուսում.** Բուհի գործու-նեության արդյունավետությունն ապահո-վելու համար ՀԵՀ-ը կարևորում է պրոֆեսիոնալ ու մոտիվացված աշխատա-կազմ ունենալը:

13. **Հեռանկարային զարգացում.** Բուհի ռեկտորը, որպես որակի ապահովման գործընթացների կառավարիչ ու վերահսկող, սահմանում է թիրախային նպատակներ և

approach.

7. **Accountability and transparency.**EUA is accountable to its stakeholders, regularly providing complete information on the processes implemented in the university.

8. **Measurability.** The activities of the EUA are based on measurable qualitative and quantitative indicators (KPI) and data.

9. **Credibility.** Assessment based on measurable and reliable data at the EUA ensures reliable assessment results and the credibility of the qualifications awarded.

10. **Integration of innovations.** EUA emphasizes and encourages the use of new approaches and ideas in quality assurance processes.

11. **Liability.** The entire staff of the university is responsible for the quality of educational services provided by the university.

12. **Professional development and encouragement of staff.** In order to ensure the effectiveness of the university activities, EUA emphasizes having a professional and motivated staff.

13. **Perspective development.** The rector of the university, as a manager and supervisor of quality assurance processes, sets target goals and is consistent in their implementation, ensuring the interdependence of strategic management and quality assurance processes.

14. **Coherence.** The processes of quality assurance implemented at the EUA are considered as one complete system, therefore, the processes planned in all fields of the EUA activity are planned, implemented, monitored, evaluated and improved with a systematic approach.

հետևողական է դրանց իրականացման հարցում՝ ապահովելով ռազմավարական կառավարման ու որակի ապահովման գործընթացների փոխկապակցվածությունը:

14. **Համակարգվածություն**. ՀԵՀ-ում իրականացվող որակի ապահովման գործընթացները դիտարկվում են որպես մեկ ամբողջական համակարգ, ուստի, ՀԵՀ-ի գործունեության բոլոր տիրույթներում նախատեսված գործընթացները պլանավորվում, իրականացվում, մշտադիտարկվում, գնահատվում ու լավարկվում են համակարգային մոտեցմամբ:

## 4. ՀԵՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՀ-ում որակի ապահովման գործընթացներն իրականացվում են հետևյալ ուղղություններով

1. **Ռազմավարական կառավարում և վարչարարություն.**

- ✓ ՀԵՀ առաքելության ու ՌԾ-ի գերակա նպատակների և խնդիրների իրականացման մշտադիտարկում,
- ✓ ՌԾ-ի կատարողականի գնահատում՝ ըստ ԳԱՑ-երի,
- ✓ Ղեկավար կազմի, կառուցվածքային ստորաբաժանումների գործառութային վերլուծության և գործունեության արդյունավետության գնահատում,
- ✓ Բուհի կառավարման մարմինների ընտրության ընթացակարգերի թափանցիկության ապահովում և համապատասխանություն ՀՀ կրթության օրենսդրությանը,
- ✓ Որոշումների կայացման գործում ՀԵՀ առանցքային շահակիցների ներգրավվածության ապահովում, շահակիցների կարիքների ու պահանջների վերհանում ու բավարարում,
- ✓ Որոշումների կայացման համար ոլորտային վերլուծությունների կատարում,
- ✓ Բուհի գործունության հաշվետվողականության ու թափանցիկության քաղաքականության իրականացման և մեխա-

## 4. KEY DIRECTIONS FOR EUA QUALITY ASSURANCE

The processes of quality assurance at the EUA are carried out in the following dimensions:

1. **Strategic management and administration.**

- ✓ Monitoring of the implementation of the mission of the EUA and the priority goals and tasks of the SP,
- ✓ Evaluation of the performance of the SP according to the KPI,
- ✓ Functional analysis and evaluation of the effectiveness of the authorities, structural divisions,
- ✓ Ensuring the transparency of the selection procedures of university authorities and compliance with RA education legislation,
- ✓ Ensuring the involvement of the key beneficiaries of the EUA in decision-making, highlighting and satisfying the needs and demands of the beneficiaries,
- ✓ Carrying out sector analysis for decision-making,
- ✓ Monitoring the implementation of the policy of accountability and transparency of the university activity and the application of mechanisms,
- ✓ Application of PDCA quality management cycle for implementation of all university processes.

նիզմների կիրառման մշտադիտարկում,
- ✓ Բուհի բոլոր գործընթացների իրականացման ՊԻԳԲ որակի կառավարման շրջափուլի կիրառում:

**2. Մասնագիտական կրթական ծրագրեր.**
- ✓ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման նպատակով համապատասխան փաստաթղթային բազայի ապահովում,
- ✓ մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանության ապահովում պետության առաջնահերթություններին, բուհի շահակիցների պահանջներին ու կարիքներին, որակավորումների շրջանակներին, որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշներին՝ հաշվի առնելով ԵԲԿՏ տեղի ունեցող կրթական բարեփոխումները,
- ✓ մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, դասընթացների որակի գնահատում,
- ✓ բուհում բարեվարքության կանոնների վերահսկման մեխանիզմների մշակում, կիրառում, գնահատում ու վերանայում,
- ✓ պրակտիկաների արդյունավետության գնահատում,
- ✓ մասնագիտական կրթական ծրագերով սահմանված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանության ապահովում կրթական վերջնարդյունքներին,
- ✓ դասընթացների ծրագրերի, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդների, պրակտիկաների վերաբերյալ շահակիցներին բավարարվածության վերաբերյալ պարբերական հարցումների անցկացում,
- ✓ ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի մշտադիտակում,
- ✓ ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողական հարցումների իրականացում, դրանց արդյունքների վերլուծություն և քննարկումների իրականացում համապատասխան պատասխանատու-

**2. Professional degree programs.**
- ✓ provision of appropriate documentation base for the implementation of professional degree programs,
- ✓ ensuring the compliance of professional degree programs with the priorities of the state, the requirements and needs of the beneficiaries of the university, the scope of qualifications, the European and national standards of quality assurance, taking into account the educational reforms taking place at the EHEA,
- ✓ evaluation of the quality of professional degree programs, curricula, courses,
- ✓ development, application, evaluation and review of control mechanisms of rules of conduct at the university,
- ✓ evaluation of the effectiveness of practices,
- ✓ Ensuring compliance of teaching, learning and evaluation methods with educational outcomes defined by professional degree programs,
- ✓ Conducting periodic surveys on the satisfaction of the beneficiaries regarding the course programs, learning, teaching and evaluation methods, practices,
- ✓ monitoring of graduation theses, master's theses,
- ✓ Implementation of student surveys regarding the educational process, analysis of their results and implementation of discussions with relevant responsible people.

ների հետ:

**3. Ուսանողակենտրոնություն**

- ✓ Ուսանողների հավաքագրման ու ընդունելության քաղաքականության մշակում, իրականացում, մշտադիտարկում և վերանայում,
- ✓ Ուսանողների առաջընթացի գնահատում,
- ✓ Ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների ու ուղղորդումների արդյունավետության գնահատում,
- ✓ Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վերլուծությունների իրականացում,
- ✓ Ուսանողական խորհրդի ու ուսանողական գիտական ընկերության գործունության գնահատում
- ✓ Ուսանողների (այդ թվում՝ հատուկ կարիք ունեցող ուսանողների) կարիքների գնահատում և բավարարում:

**4. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմեր (ՊԴ և ՈՒՕ կազմեր).**

- ✓ ՊԴ և ՈՒՕ կազմերի ընտրության,ատեստավորման փաստաթղթային հենքի մշակում, մշտադիտարկում և վերանայում,
- ✓ ՊԴ ու ՈՒՕ կազմերի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայում,
- ✓ ՊԴ և ՈՒՕ կազմերի գործունեության արդյունավետության գնահատում տարբեր մեխանիզմներով,
- ✓ ՊԴ և ՈՒՕ կազմերի մասնագիտական կատարելագործմանն ուղղված քաղաքականության իրականացման մշտադիտարկում և վերանայում:

**5.Գիտահետազոտական կարողությունների զարգացում.**

- ✓ Գիտահետազոտության գործունեության փաստաթղթային հենքի մշտադիտարկում, վերանայում,
- ✓ Հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների կիրառման մշտադիտարկում,

**3. Student-centered learning**

- ✓ Development, implementation, monitoring and review of student recruitment and admission policies,
- ✓ Assessment of student progress,
- ✓ Evaluation of the effectiveness of counseling and guidance provided to students,
- ✓ Carrying out analysis on the employment of graduates,
- ✓ Assessment of the activity of the student council and the student scientific society
- ✓ Assessing and meeting the needs of students (including students with special needs).

**4. Academic and Support staff .**

- ✓ Developing, monitoring and reviewing the documentation basis for the selection and certification of the academic and support staff,
- ✓ Review of the requirements for the professional qualifications of the academic and support staff,
- ✓ Evaluation of the effectiveness of the activities of the academic and support staff with different mechanisms,
- ✓ Monitoring and reviewing the implementation of the policy aimed at the professional improvement of the academic and support staff.

**5. Development of scientific research capacities.**

- ✓ Monitoring, review of the documentary basis of scientific research activities,
- ✓ Monitoring and review of the application of research and educational process interconnection mechanisms,
- ✓ Monitoring and review of the application

վերանայում,
- ✓ Ատենախոսությունների հրապարակային նախապաշտպանության մեխանիզմների կիրառման մշտադիտարկում, վերանայում,
- ✓ «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածուի մշտադիտարկում,
- ✓ Ավարտական աշխատանքներում, մագիստրոսական թեզերում, հետազոտական նախագծերում, կուրսային, անհատական աշխատանքներում հետազոտական բաղադրիչի առկայության ու գործնական ոլորտի հետ կապի փոխկապակցվածության մշտադիտարկում,
- ✓ Գիտահետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողների ներգրավվածության ապահովման մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատում, վերանայում,
- ✓ Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատում, վերանայում,
- ✓ Միջազգային և տեղական հետազոտական դրամաշնորհային ծրագրերում ՀԵՀ մասնակցելու հնարավորության գնահատում, վերհանված խնդիրների վերլուծություն և քննարկումների իրականացում համապատասխան պատասխանատուների հետ,
- ✓ Գիտական արդյունքների հրատարակման խրախուսման մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատում, վերանայում:

**6. Մարդկային, նյութական, տեղեկատվական և ֆինանսական ռեսուրսների և ենթակառուցվածքների կառավարում.**

- ✓ ՄՌԿ քաղաքականության իրականացման մշտադիտարկում,
- ✓ Անձնակազմի խրախուսման քաղաքականության իրականացման մշտադիտարկում,

of mechanisms for public pre-defense of dissertations,
- ✓ Monitoring of the "European University" collection of scientific articles,
- ✓ Monitoring of the presence of the research component in graduation theses, master's theses, research projects, coursework, individual works and the interconnection with the practical field,
- ✓ Assessment and review of the effectiveness of mechanisms for ensuring the involvement of the academic staff and students in scientific research works,
- ✓ Evaluation, review of the efficiency of the application of mechanisms of commercialization of scientific research results,
- ✓ Evaluation of the possibility of participating in international and local research grant programs, analysis of the raised issues and carrying out discussions with the relevant responsibles,
- ✓ Evaluation and review of the effectiveness of the mechanisms for encouraging the publication of scientific results.

**6. Management of human, material, information and financial resources and infrastructure.**

- ✓ Monitoring of HRM policy implementation,
- ✓ Monitoring of staff incentive policy implementation,
- ✓ Monitoring the implementation of the

- ✓ Ֆինանսական ռեսուրսների քաղաքականության իրականացման մշտադիտարկում՝ համապատասխան հիմքերի ուսումնասիրությամբ,
- ✓ ՀԵՀ ռեսուրսների, ենթակառուցվածքների և օժանդակ ծառայությունների որակի վերաբերյալ սովորողների (այդ թվում՝ հատուկ կարիք ունեցող), ՊԴ, ՈՒՕ և վարչական կազմի շրջանում հարցումների անցկացում:

**7. Արտաքին կապեր և միջազգայնացում.**

- ✓ Արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված քաղաքականության և/կամ ռազմավարության իրականացման մշտադիտարկում, վերանայում,
- ✓ Ակադեմիական շարժունության խթանման մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատում, վերանայում:

**8. Որակի ներքին ապահովում.**

- ✓ Որակի ապահովման քաղաքականության/ռազմավարության մշակում, իրականացում, մշտադիտարկում, վերանայում,
- ✓ Որակի ապահովման գործընթացների իրականացում ՊԻԳԲ շրջափուլով,
- ✓ Շահակիցների կարիքների վերհանման քաղաքականության մշակում, իրականացում,
- ✓ Առաջավոր փորձի ուսումնասիրություն և ներդրում ՀԵՀ-ում,
- ✓ ՀԵՀ որակի ներքին ապահովման համակարգի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում,
- ✓ Որակի ապահովման փաստաթղթային բազայի, մեխանիզմների, գործիքակազմի մշակում, կիրառում, մշտադիտարկում, վերանայում,
- ✓ Որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավվածության ապահովում, շահակիցների կարիքների ու պահանջների վերհանում ու բավարարում,
- ✓ Որակի մշակույթի ամրապնդում և տարածում,

financial resources policy by studying the relevant bases,

- ✓ Conducting surveys among students (including those with special needs), academic staff, support staff and administrative staff on the quality of EU resources, infrastructure and support services.

**7. Foreign relations and internationalization.**

- ✓ Monitoring, reviewing the implementation of policies and/or strategies aimed at foreign relations and internationalization,
- ✓ Evaluation of effectiveness of mechanisms for promoting academic mobility, review.

**8. Internal quality assurance.**

- ✓ Quality assurance policy/strategy development, implementation, monitoring, review,
- ✓ Implementation of quality assurance processes in the PDCA cycle,
- ✓ Development and implementation of the policy of addressing stakeholders' needs,
- ✓ Research and contribution of leading experience at the EUA,
- ✓ Identifying the strengths and weaknesses of the internal quality assurance system of the EUA,
- ✓ Development, application, monitoring, review of quality assurance documentation base, mechanisms, tools,
- ✓ Ensuring the involvement of stakeholders in quality assurance processes, highlighting and meeting the needs and demands of stakeholders,
- ✓ Strengthening and spreading the culture of quality,
- ✓ Carrying out analyses of precise fields,
- ✓ Evaluation of the efficiency of the university activity,
- ✓ Organization of events aimed at the

- ✓ Ոլորտային վերլուծությունների կատարում,
- ✓ Բուհի գործունության արդյունավետության գնահատում,
- ✓ Որակի ապահովման մասնագետների, պատասխանատուների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, նմանատիպ միջոցառումներին մասնակցություն:

professional development of quality assurance specialists, responsible people, participation in similar events.

## 5. ՀԵՀ-ՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

5.1 ՀԵՀ-ում կիրառվում են որակի ապահովման հետևյալ գործիքները.

1. հարցումներ,
2. ֆոկուս-խմբային քննարկումներ,
3. կլոր-սեղան քննարկումներ,
4. հարցազրույցներ,
5. դիտարկումներ,
6. դեպքի ուսումնասիրություններ,
7. ինքնագնահատում կամ ինքնավերլուծություն (այդ թվում՝ SWOT և այլ վերլուծությունները),
8. գործընկերային գնահատումներ,
9. հաջողված փորձի ուսումնասիրություններ,
10. փորձագիտական կարծիքի տրամադրում:

5.2 *Հարցումը* տեղեկատվության հավաքագրման լայն տարածում ունեցող գործիքներից է, որը հնարավորություն է տալիս ձեռքբերել անհրաժեշտ տեղեկություն անմիջական շահակիցներից՝ վիճակագրություն կազմելու, խնդիրներ բացահայտելու, կարծիքներ ու առաջարկություններ հավաքագրելու նպատակով:

5.2.1 Հարցման ընտրանքը պայմանավորված է հարցման նպատակով, հարցման համար նախատեսված ժամանակահատվածով, ըստ այդմ՝ ընտրանքը կարող է լինել **պատահական** (տարբեր ֆակուլտետի ուսանողի մասնակցություն) կամ թիրախային (կոնկրետ մեկ խմբի ուսանողների հետ

## 5. QUALITY ASSURANCE TOOLKIT APPLIED IN EUA

5.1 The following quality assurance tools are used at the EUA:

1. surveys,
2. focus group discussions,
3. round-table discussions,
4. interviews,
5. observations,
6. case studies,
7. self-assessment or self-analysis (including SWOT and other analyses);
8. peer evaluations,
9. successful experience studies,
10. Provision of expert opinion.

5.2 *A survey* is one of the most widely used information gathering tools, which enables obtaining necessary information from direct stakeholders in order to compile statistics, identify problems, collect opinions and suggestions.

5.2.1 The sample of the survey is determined by the purpose of the survey, the period of the survey, accordingly, the sample can be **random** (participation of students from different faculties) or targeted (participation in the survey with a specific group of students).

հարցմանը մասնակցություն):

5.2.2 Հարցումների արդյունքների արժանահավատությունն ապահովելու համար հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

- ✓ անանունությունը,
- ✓ հարցաշարերի կառուցվածքն ու բովանդակությունը,
- ✓ ճիշտ ընտրված ընտրանքը,
- ✓ հարցման անցկացման ճիշտ ժամանակի ընտրությունը
- ✓ ընտրանքին հարցման նպատակի ու արդյունքների կիրառման վերաբերյալ համակողմանի տեղեկատվություն տրամադրելը:

5.2.3 ՀԵՀ-ում հարցումներն անցկացվում են ՀԵՀ-ում հարցումների անցկացման ընթացակարգին համապատասխան:

5.3 *Ֆոկուս խմբային քննարկումներն* առկա խնդիրների ու հարցերի վերաբերյալ ՀԵՀ ներքին և արտաքին շահառուների դիրքորոշումների, կարծիքների բացահայտման նպատակով կիրառվող գործիքներից մեկն է:

5.3.1 Ֆոկուս-խմբային քննարկումները կազմակերպվում և անցկացվում են հատուկ ընտրված թիրախային խմբի (8-12 մասնակից) հետ:

5.3.2 Ֆոկուս խմբային քննարկումները հնարավորություն են տալիս ծավալել քննարկումներ ընտրանքի կողմից բարձրացված խնդիրների կամ հիմնահարցերի շուրջ և առաջարկել համապատասխան լուծումներ:

5.3.3 Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների արժանահավատությունն ապահովելու համար հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

- ✓ ֆոկուս խմբային քննարկում անցկացնելու նպատակը,
- ✓ հարցերի հստակությունը,
- ✓ մոդերատորի փորձառությունը:

5.3.4 ՀԵՀ-ում ֆոկուս խմբային քննարկումներն անցկացվում են ՀԵՀ ֆոկուս խմբային քննարկման իրականացման կանոնակարգով:

5.2.2 The following factors are taken into account to ensure the reliability of survey results:

- ✓ anonymity,
- ✓ the structure and content of questionnaires,
- ✓ correctly selected option,
- ✓ choosing the right time to conduct the survey
- ✓ providing the sample with comprehensive information about the purpose of the survey and the application of the results.

5.2.3 Surveys at the EUA are conducted in accordance with the procedure for conducting surveys at the EUA.

5.3 Focus group discussions are one of the tools used to reveal the positions and opinions of the internal and external stakeholders of the EUA regarding existing problems and issues.

5.3.1 Focus group discussions are organized and conducted with a specially selected target group (8-12 participants).

5.3.2 Focus group discussions provide an opportunity to discuss issues raised by the sample or on issues and suggest appropriate solutions.

5.3.3 In order to ensure the reliability of the results of focus group discussions, the following factors are taken into account:

- ✓ the purpose of conducting a focus group discussion,
- ✓ clarity of questions,
- ✓ Moderator experience.

5.3.4 The focus group discussions at the EUA are conducted according to the regulations for the implementation of the EUA focus group discussion.

5.4 *Կլոր-սեղան քննարկումները* կազմակերպվում են ՀԵՀ ներքին և արտաքին շահակիցների հետ՝ ըստ թիրախային թեմաների ու ուղղությունների:

5.4.1 ՀԵՀ-ում կլոր-սեղան քննարկումները հնարավորություն են տալիս.

- բացահայտելու շահակիցների կարիքները, պահանջներն ու կարծիքները կոնկրետ ոլորտի, ՄԿԾ-ի և/կամ դասընթացների առարկայական ծրագրերի, ինչպես նաև ՀԵՀ գործունեության այլ շրջանակներում,
- քննարկմանը մասնակիցների հետ ամրապնդելու համագործակցային կապերը,
- մշակելու հետագա համագործակցության նոր ձևաչափերը,
- ձեռքբերելու նոր կապեր,
- հանդես գալ բարելավման առաջարկություններով:

5.4.2 ՀԵՀ-ում կլոր-սեղան քննարկումներն անցկացվում են ըստ անհրաժեշտության:

5.5 *Հարցազրույցները* տեղեկատվության հավաքագրման լայն տարածում ունեցող գործիքներից մեկն է, որի ընթացքում ձեռք են բերվում հարզազրուցավարին հետաքրքրող տվյալներ և տեղեկություն:

5.5.2 Հարզազրույցների արդյունքների արժանահավատությունն ապահովելու համար հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

- ✓ քննարկվող թեմայի վերաբերյալ հարցվողի իրազեկվածությունը,
- ✓ պարզ և հասկանալի ձևակեր-պումները և հարցադրումները,
- ✓ հարցազրուցավարի փորձառությունը, հաղորդակցման հմտություններն ու ճկունությունը,
- ✓ քաղաքավարությունը և էթիկան,
- ✓ հարցվողին հասկանալու պատրաս-տակամությունը,
- ✓ հարցվողներին ուղղորդումը,
- ✓ հարցազրուցավարների քննադատական-վերուծական մոտեցումը:

5.4 *Round-table discussions* are organized with internal and external stakeholders of the EUA according to target topics and directions.

5.4.1 The round-table discussions at the EUA provide an opportunity to:

- identify the needs, requirements and opinions of the beneficiaries of the specific field, the syllabuses of the educational programes and/or courses, as well as in other frameworks of the activities of the EUA,
- strengthen cooperative ties with participants in the discussion,
- develop new formats of further cooperation,
- to get new connections,
- come up with suggestions for improvement.

5.4.2 Round-table discussions are held at the EUA upon request.

5.5 Interviews are one of the most widely used information gathering tools, during which data and information of interest to the interviewer is obtained.

5.5.2 The following factors are taken into account to ensure the credibility of the interview results:

- ✓ the respondent's awareness of the discussed topic,
- ✓ simple and understandable formations of questions,
- ✓ the interviewer's experience, communication skills and flexibility,
- ✓ courtesy and ethics,
- ✓ willingness to understand the respondent,
- ✓ guidance of respondents,
- ✓ the interviewers' critical-analytical approach.

| | |
|---|---|
| 5.5.3 ՀԵՀ-ում հարցազրույցներն անցկացվում են ըստ անհրաժեշտության: | 5.5.3 Interviews are held at the EUA upon according to need. |
| 5.6 *Դիտարկումը* հետաքրքրող նյութի/իրավիճակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու գործիք է, ուղղակի կամ անմիջական արձանագրությամբ: | 5.6 Observation is a tool for obtaining additional information about the material/situation of interest, directly or by direct recording. |
| 5.6.1 Դիտարկումը նպաստում է ուսումնասիրվող օբյեկտի/նյութի/իրավիճակի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելուն: | 5.6.1 Observation contributes to a complete understanding of the object/material/situation being studied. |
| 5.6.2 ՀԵՀ-ում դիտարկվում են ուսումնական գործընթացի կազմակերպումն ու անցկացումը, մասնավորապես, ուսումնական պարապմունքների անցկացումը, ուսանողների հաճախումները, քննական պրոցեսը, ՀԵՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները: | 5.6.2 The organization and conduct of the educational process, in particular, the conduct of training sessions, student attendance, the examination process, the work of the structural units of the EUA are observed in EUA. |
| 5.6.3 Դիտարկումների արդյունքների արժանահավատությունն ապահովելու համար հաշվի են առնվում դիտարկողի փորձառությունը, ռացիոնալությունը և ճկունությունը: | 5.6.3 The experience, rationality and flexibility of the observer are taken into account to ensure the reliability of the observation results. |
| 5.7 Դեպքի ուսումնասիրությունը մեկ կամ մի քանի փոխկապակցված դեպքերի համալիր ուսումնասիրությունն է, որը հնարավորություն է տալիս ձեռք բերել հստակ տեղեկատվություն տվյալ դեպքի վերաբերյալ: | 5.7 A case study is a complex study of one or more interrelated cases that provides an opportunity to obtain clear information about a given case. |
| 5.7.1 ՀԵՀ-ում դեպքի ուսումնասիրություններն անցկացվում են ըստ անհրաժեշտության: | 5.7.1 Case studies are conducted as needed at the EUA. |
| 5.7.2 Դեպքի ուսումնասիրության արդյունքների արժանահավատությունն ապահովելու համար հաշվի են առնվում դեպքը ուսումնասիրողի քննադատական, վերլուծական ունակությունները, հաղորդակցման հմտությունները՝ էթիկայի կանոնների պահպանմամբ, առաջնային և երկրորդական տվյալների հավաքագրման ու դասակարգման հմտությունները, հավաստի տեղեկատվության հիման վրա որոշումների կայացման հմտությունը, փաստարկված հիմնավորումներ ներկայացնելու ունակությունը: | 5.7.2 To ensure the credibility of the results of the case study, the case researcher's critical and analytical abilities, communication skills in compliance with the rules of ethics, primary and secondary data collection and classification skills, the ability to make decisions based on reliable information, and the ability to present reasoned arguments are taken into account. |
| 5.8 *Ինքնագնահատումը կամ ինքնավեր-* | 5.8 Self-assessment or self-analysis is one of |

*լուծությունը* որակի ապահովման առանցքային գործիքներից է, որը թույլ է տալիս գնահատել ՀԵՀ կառուցվածքային ստորաբաժանման արդյունավետությունը և/կամ ՄԿԾ-ների որակը՝ ըստ նախապես սահմանված չափանիշների ու չափորոշիչների:

the key tools of quality assurance, which allows to evaluate the efficiency of the structural unit of the EUA and/or the quality of the degree programs according to predefined criteria and standards.

5.8.1 ՀԵՀ-ում ինքնագնահատումն ու ինքնավերլուծությունը կանոնակարգվում է ՀԵՀ հաշվետվողականության ընթացակարգով, համաձայն որի՝ ինքնավերլուծության հաշվետվություններում ներառված է SWOT վերլուծություն, որի շրջանակում բացահայտվում, ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում ՀԵՀ-ի կամ նրա տվյալ ստորաբաժանման գործունեության ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները:

5.8.1 The self-assessment and self-analysis at the EUA is regulated by the EUA accountability procedure, according to which the self-analysis reports include a SWOT analysis, within the framework of which the strengths and weaknesses, opportunities and threats of the activities of the EUA or its given unit are identified, studied and analyzed.

5.8.2 Ինստիտուցիոնալ մակարդակում իրականացվող ինքնավերլուծության օրինակներից են բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, բուհի ռազմավարության միջնաժամկետ գնահատումը, ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատումը, կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնական տարվա կամ տարեկան հաշվետվությունները:

5.8.2 Among the examples of carried out self-analysis at the institutional level are university institutional self-analysis of institutional capacity for the purpose of accreditation, mid-term evaluation of the university strategy, evaluation of strategic plan performance, academic year or annual reports of structural divisions.

5.9 *Գործընկերային գնահատումը* հորիզոնական մակարդակում գտնվող անձանց փոխադարձ գնահատումն է՝ միտված խնդիրների վերհանմանը և օբյեկտիվ կարծիքների բացահայտմանը:

5.9 *Peer evaluation* is a mutual assessment of persons at a horizontal level aimed at raising issues and revealing objective opinions.

5.9.1 ՀԵՀ-ում գործընկերային գնահատումն իրականացվում է դասալսումների, նույն պաշտոնն ունեցող տարբեր անձանց աշխատանքների վերաբերյալ կարծիքի տրամադրման տեսքով՝ դասապրոցեսի և/կամ աշխատանքների լավարկման նպատակադրումից ելնելով:

5.9.1 Peer evaluation at the EUA is carried out in the form of lectures, providing opinions on the work of different persons with the same position, based on the goal of improving the course process and/or work.

5.9.2 ՀԵՀ-ում գործընկերային գնահատումն իրականացվում է պլանավորված՝ ըստ սահմանված ժամանակացույցի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության:

5.9.2 Peer evaluation is carried out on a planned basis, according to the established schedule, as well as according to need.

5.10 *Հաջողված փորձի ուսումնասիրությունները* ՀԵՀ գործունեության ու իրականացվող կրթական ծրագրերի բարելավման գործիք կամ եղանակ է՝ միտված որակի մշակույթի տարածմանը:

5.10.1 ՀԵՀ-ում հաջողված փորձի ուսումնասիրություններն իրականացվում են բենչմարքինգի ձևաչափով՝ ըստ ՀԵՀ-ում բենչմարքինգի իրականացման քաղաքականության և ընթացակարգի:

5.11 *Փորձագիտական կարծիքի տրամադրումը* տվյալ ոլորտի մասնագետների կողմից փաստաթղթի վերաբերյալ կարծիքի տրամադրումն է:

5.11.1 ՀԵՀ-ում փորձաքննության են ենթարկվում ՄԿԾ-ները (ամբիոնի նիստերի ժամանակ քննարկում, արտաքին գրախոսություն), ամբիոնի պլաններն ու հաշվետվությունները, դասընթացների առարկայական ծրագրերը (ամբիոնի նիստերի ժամանակ քննարկում), ՀԵՀ նորմատիվ իրավական ակտերի, կառուցվածքային ստորաբաժանումների պլանների ու հաշվետվությունների քննարկում (գիտխորհրդում քննարկում ու հաստատում) և այլն:

